ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ
ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

28 օգոստոսի 2019 թվական N57

ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԸՆԴԳՐԿՎԱԾ, ՊԵՏԱԿԱՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՕՏԱՐՄԱՆԸ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի N286 որոշմամբ հաստատված կարգի դրույթներով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի հունվարի 14-ի N16-Ն որոշմամբ հաստատված կարգի դրույթներով, Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքի ավագանին

որոշում է՝

1.Տալ համաձայնություն Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքի Լիճք գյուղում գտնվող, պետական սեփականություն հանդիսացող, գյուղատնտեսական նշանակության 8,17739 հա այլ հողատեսքի (կադաստրային ծածկագիր՝ 09-039-0127-0011, անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական՝ N19072019-09-0034) աճուրդային կարգով օտարմանը՝ մեկնարկային գին սահմանելով 817 740 (ութ հարյուր տասնյոթ հազար յոթ հարյուր քառասուն) ՀՀ դրամ:
2.Համայնքի ղեկավարին՝ ապահովել սույն որոշումից բխող անհրաժեշտ գործառույթների իրականացումը:

Կողմ (6)	Դեմ(0)	Ձեռնպահ(0)
ԱԴԱՄՅԱՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ		
ԳԵՎՈՐԳՅԱՆ ԳԱԳԻԿ		
ԳԵՎՈՐԳՅԱՆ ԽԱՉԱՏՈՒՐ		
ԶԱՔԱՐՅԱՆ ՀՐԱՅՐ		
ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ ՍՈՒՐԵՆ		
ՄԻՔԱԵԼՅԱՆ ՍԱՄՎԵԼ		

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Մ. ԶԱՔԱՐՅԱՆ

2019թ. օգոստոսի 28
ք. Մեղրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ
ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

28 օգոստոսի 2019 թվական N58

ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐԴԱՆԻՁՈՐ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՀՈՂԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՍԽԵՄԱՅՈՒՄ ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ ՔՆՆԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 29-րդ կետի դրույթներով, համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N1918-Ն որոշման և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը՝ Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքի ավագանին

որոշում է՝

1.Հավանություն տալ ՀՀ Սյունիքի մարզի Մեղրի համայնքի Վարդանիձոր բնակավայրի հողերի օգտագործման ժամանակավոր սխեմայում առաջարկվող փոփոխությանը, ըստ որի նախատեսվում է ընդերքն օգտակար հանածոների արդյունահանման համար, համայնքի վարչական տարածքում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության 17,12 հա այլ հողատեսքը (կադաստրային ծածկագիր՝ 09-092-0333-0179, անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական՝ N25072019-09-0036) փոխադրել արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության օբյեկտների հողերի կատեգորիա՝ «ընդերքօգտագործման հողեր» գործառնական նշանակությամբ:
2.Համայնքի ղեկավարին՝ կազմել և օրենսդրությամբ սահմանված կարգով հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաների համաձայնեցման միջգերատեսչական հանձնաժողովի համաձայնեցմանը ներկայացնել համապատասխան հողաշինարարական գործ:

Կողմ (6) Դեմ(0) Ձեռնպահ(0)
ԱԴԱՄՅԱՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ
ԳԵՎՈՐԳՅԱՆ ԳԱԳԻԿ
ԳԵՎՈՐԳՅԱՆ ԽԱՉԱՏՈՒՐ
ՁԱՔԱՐՅԱՆ ՀՐԱՅՐ
ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ ՍՈՒՐԵՆ
ՄԻՔԱԵԼՅԱՆ ՍԱՄՎԵԼ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Մ. ՁԱՔԱՐՅԱՆ

2019թ. օգոստոսի 28
ք. Մեղրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ
ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

28 օգոստոսի 2019 թվական N59

ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՈՒՅՔԻ 2018 ԹՎԱԿԱՆԻ ԳՈՒՅՔԱԳՐՄԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 32-րդ կետով, հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը՝ Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքի ավագանին

որոշում է՝

1.Հաստատել Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքի սեփականություն հանդիսացող գույքի 2018 թվականի գույքագրման փաստաթղթերը հիմնական միջոցների և տնտեսական գույքի գծով՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

Կողմ (6) Դեմ(0) Ձեռնպահ(0)

ԱԴԱՄՅԱՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ
ԳԵՎՈՐԳՅԱՆ ԳԱԳԻԿ
ԳԵՎՈՐԳՅԱՆ ԽԱՉԱՏՈՒՐ
ՋԱՔԱՐՅԱՆ ՀՐԱՅՐ
ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ ՍՈՒՐԵՆ
ՄԻՔԱԵԼՅԱՆ ՍԱՄՎԵԼ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Մ. ՋԱՔԱՐՅԱՆ

2019թ. օգոստոսի 28
ք. Մեղրի

Հավելված

Մեղրի համայնքի ավագանու
2019 թվականի սեպտեմբերի
28-ի N59 որոշման

ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՈՒՅՔԻ 2018 ԹՎԱԿԱՆԻ ԳՈՒՅՔԱԳՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

հ/հ	Հիմնարկի անվանումը	Շենքեր	Շինություն	Համակարգչային տեխնիկա	Տրանսպորտ միջոց	Գործիքներ տնտ գույք	Գրադարանային ֆոնդ	Այլ հիմնական միջոցներ	Ընդամենը հիմնական միջոցներ
		0 10	0 11	0 13	0 15	0 16	0 18	0 19	0 10
1	**Մեղրիի համայնքապետարան**	**486 949,5**	**98,1**	**25 109,3**	58 190,4		**14 301,3**	**1 023 729,0**	**1 608 377,6**
2	Նախադպրոցական հիմնարկներ	**55 236,3**	**0,0**	**470,0**	**0,0**	**0,0**	**0,0**	**28 052,5**	**83 758,8**
2.1	«Մեղրի համայնքի մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպություն	44 437,3						7 557,0	**51 994,3**
2.2	«Ագարակի մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպություն	10 799,0		470,0				20 495,5	**31 764,5**
3	**« Մեղրի համայնքի <<ԱՐԵՎԻՔ>> արվեստի դպրոց,, համայնքային ոչ առևտրային կազմակերպություն**			**367,0**		**5 942,0**	2 189,5	6 504,8	**15 003,3**
4	**«Մեղրիի մարզամշակութային կենտրոն» համայնքային ոչ առևտրային կազմակերպություն**	**64 533,5**	**9 392,5**				11 600,3	22 521,7	**108 048,0**
5	**«Մեղրիի կոմունալ տնտեսություն, բարեկարգում» համայնքային ոչ առևտրային կազմակերպություն**	**3 595,0**		**1 183,2**				4 378,2	**9 156,4**
	ԸՆԴԱՄԵՆԸ	**610 314,3**	**9 490,6**	**27 129,5**	**58 190,4**	**5 942,0**	**28 091,1**	**1 085 186,2**	**1 824 344,1**

Համայնքի ղեկավար՝ Մ. Զաքարյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ
ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
28 օգոստոսի 2019 թվական N60

ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԳՈՒՅՔՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆԸ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի, հաշվի առնելով համայնքի ղեկավարի առաջարկությունը, «Մեղրիի կոմունալ տնտեսություն, բարեկարգում» համայնքային ոչ առևտրային կազմակերպության աշխատանքները բարելավելու, նրա կանոնադրական պարտավորությունների պատշաճ կատարմանն աջակցելու նպատակով Մեղրի համայնքի ավագանին

որոշում է՝

1.Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքին սեփականության իրավունքով պատկանող գույքն անորոշ ժամկետով, անհատույց օգտագործման իրավունքով տրամադրել «Մեղրիի կոմունալ տնտեսություն, բարեկարգում» համայնքային ոչ առևտրային կազմակերպությանը 231 060 100 (երկու հարյուր երեսունմեկ միլիոն վաթսուն հազար մեկ հարյուր) ՀՀ դրամ հաշվեկշռային ընդհանուր արժեքով՝ համաձայն հավելվածի:
2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

Կողմ (6) Դեմ(0) Ձեռնպահ(0)
ԱԴԱՄՅԱՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ
ԳԵՎՈՐԳՅԱՆ ԳԱԳԻԿ
ԳԵՎՈՐԳՅԱՆ ԽԱՉԱՏՈՒՐ
ԶԱՔԱՐՅԱՆ ՀՐԱՅՐ
ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ ՍՈՒՐԵՆ
ՄԻՔԱԵԼՅԱՆ ՍԱՄՎԵԼ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Մ. ԶԱՔԱՐՅԱՆ

2019թ. օգոստոսի 28
ք. Մեղրի

Հավելված
Մեղրի համայնքի ավագանու
2019 թվականի օգոստոսի 28-ի
N60 որոշման

ՑՈՒՑԱԿ

«ՄԵՂՐԻԻ ԿՈՄՈՒՆԱԼ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ,ԲԱՐԵԿԱՐԳՈՒՄ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ԳՈՒՅՔԻ

h/h	Գույքի անվանումը	Ձեռք բերման ամսաթիվը	Չափման միավորը	Գինը	Քանակը	Գումարը
1	Ավտոմեքենա MAZ KBR-P8M	2018	հատ	21800000	1	21 800 000,00
2	ԱՎՏՈՄԵՔԵՆԱ MAZ	2018	հատ	21300000	1	21 300 000,00
3	ԱՎՏՈՄԵՔԵՆԱ MAZ	2018	հատ	18700000	2	37 400 000,00
4	ԱՎՏՈՄԵՔԵՆԱ FORD TRANZIT VAN460E2.2D	2018	հատ	18500000	3	55 500 000,00
5	ԷՔՍԿԱՎԱՏՈՐ JCB 3C	2018	հատ	37171200	2	74 342 400,00
6	ՄԵՏԱՂԱԿԱՆ ԱՂԲԱՐԿՂ	2018	հատ	84900	148	12 565 200,00
7	ՊԼԱՍՏԻԿ ԱՂԲԱՐԿՂ	2018	հատ	26000	160	4 160 000,00
8	ՆՍՏԱՐԱՆ	2018	հատ	68700	55	3 778 500,00
9	ԾԱՂԿԱՄԱՆ	2018	հատ	107000	2	214 000,00
ԸՆԴԱՄԵՆԸ						231 060 100

Համայնքի ղեկավար՝ Մ. Զաքարյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ
ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

28 օգոստոսի 2019 թվական N61

ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱԼՎԱՆՔ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՀՈՂԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՍԽԵՄԱՅՈՒՄ ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ ՔՆՆԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 29-րդ կետի դրույթներով, համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N1918-Ն որոշման և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը՝ Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքի ավագանին

որոշում է՝

1.Հավանություն տալ ՀՀ Սյունիքի մարզի Մեղրի համայնքի Ալվանք բնակավայրի հողերի օգտագործման ժամանակավոր սխեմայում առաջարկվող փոփոխությանը, ըստ որի նախատեսվում է սեյսմիկ կայանի տեղադրման համար, համայնքի վարչական տարածքում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության 0,005 հա այլ հողատեսքը (կադաստրային ծածկագիր՝ 09-009-0146-0019, անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական՝ N26072019-09-0022) փոխադրել բնակավայրերի հողերի կատեգորիա՝ «հասարակական կառուցապատման հողեր» գործառնական նշանակությամբ:
2.Համայնքի ղեկավարին՝ կազմել և օրենսդրությամբ սահմանված կարգով հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաների համաձայնեցման միջգերատեսչական հանձնաժողովի համաձայնեցմանը ներկայացնել համապատասխան հողաշինարարական գործ:

Կողմ (6) Դեմ(0) Ձեռնպահ(0)

ԱԴԱՄՅԱՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ
ԳԵՎՈՐԳՅԱՆ ԳԱԳԻԿ
ԳԵՎՈՐԳՅԱՆ ԽԱՉԱՏՈՒՐ
ԶԱՔԱՐՅԱՆ ՀՐԱՅՐ
ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ ՍՈՒՐԵՆ
ՄԻՔԱԵԼՅԱՆ ՍԱՄՎԵԼ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Մ. ԶԱՔԱՐՅԱՆ

2019թ. օգոստոսի 28
ք. Մեղրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ
ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
28 օգոստոսի 2019 թվական N62
ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 29-րդ կետով, «Քաղաքաշինության մասին» օրենքի 143-րդ հոդվածի 9-րդ և 12-րդ մասերով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի հունվարի 19-ի N36-Ն որոշմամբ, հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը՝ Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքի ավագանին

որոշում է՝

1.Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքի Մեղրի քաղաքի գլխավոր հատակագիծը՝ քաղաքացու սեփականություն հանդիսացող 0,02765 հա (կադաստրային ծածկագիր՝ 09-005-0061-0013 և 09-005-0061-0001-ից, անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական թիվ 2388056) հատուկ պահպանվող տարածքների <<պատմամշակույթային հողեր>> գործառնական նշանակության հողամասը՝ համաձայն հավելվածի, փոխադրել բնակավայրերի հողերի կատեգորիա՝ «բնակելի կառուցապատման հողեր» գործառնական նշանակությամբ:
2.Սույն որոշման 1-ին կետով հողամասի նպատակային նշանակության կատարված փոփոխության մասին 10-օրյա ժամկետում օրենսդրությամբ սահմանված կարգով տեղեկացնել Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեին և Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության կոմիտեին՝ կցելով սույն որոշման սահմանված կարգով հաստատված պատճեն:

Կողմ (6) Դեմ(0) Ձեռնպահ(0)
ԱԴԱՄՅԱՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ----------
ԳԵՎՈՐԳՅԱՆ ԳԱԳԻԿ ----------
ԳԵՎՈՐԳՅԱՆ ԽԱՉԱՏՈՒՐ ----------
ԶԱՔԱՐՅԱՆ ՀՐԱՅՐ ----------
ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ ՍՈՒՐԵՆ ----------
ՄԻՔԱԵԼՅԱՆ ՍԱՄՎԵԼ ----------

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Մ. ԶԱՔԱՐՅԱՆ

2019թ. օգոստոսի 28
ք. Մեղրի

ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԳԾԱԳՐԱՐ

_____ ին Հողհատկացման հիմքը _____

Նաստ Սյունիք համայնք Մեղրի հասցե _____

համայնքի ղեկավար _____ 2018թ

Մասշտաբ 1.1000



| ՀՈՂԱՄԱՍԻՆ | | |

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ
ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

28 օգոստոսի 2019 թվական N63

ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՆՈՌՆԱՁՈՐ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ԲՆԱԿԻՉՆԵՐԻՆ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՑՈՒՑԱԲԵՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով, «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» օրենքի 29-րդ հոդվածի 5-րդ մասով, հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը՝ Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքի ավագանին

որոշում է՝

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքի 2019 թվականի բյուջեի վարչական մասի պահուստային ֆոնդից հատկացնել 2 091 268 (երկու միլիոն իննսունմեկ հազար երկու հարյուր վաթսունութ) ՀՀ դրամ (բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման՝ այլ նպաստներ բյուջեից հոդվածով) Նռնաձոր բնակավայրի բնակիչներին՝ իրենց կողմից փաստացի տիրապետվող հողամասերի գնման հետևանքով առաջացած բեռի թեթևացմանը ֆինանսական աջակցություն ցուցաբերելու նպատակով՝ համաձայն հավելվածի:

Կողմ (6) Դեմ(0) Ձեռնպահ(0)

ԱԴԱՄՅԱՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ
ԳԵՎՈՐԳՅԱՆ ԳԱԳԻԿ
ԳԵՎՈՐԳՅԱՆ ԽԱՉԱՏՈՒՐ
ԶԱՔԱՐՅԱՆ ՀՐԱՅՐ
ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ ՍՈՒՐԵՆ
ՄԻՔԱԵԼՅԱՆ ՍԱՄՎԵԼ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Մ. ԶԱՔԱՐՅԱՆ

2019թ. օգոստոսի 28
ք. Մեղրի

Հավելված
ՀՀ Սյունիքի մարզի Մեղրի
համայնքի ավագանու 2019թ.
սեպտեմբերի 28-ի N63 որոշման

Հ/Հ	Անուն ազգանուն	Մակերես /հա/	Օտարման ամիս ամսա	Օտարման արժեք /դրամ/
1	Բայանդուրյան Եղիշ	0,54801	08 մայիսի 2019	253188
2	Բայանդուրյան Եղիշ	0,9944	20 մայիսի 2019	459414
3	Բայանդուրյան Վլադիմիր	0,66784	20 մայիսի 2019	308550
4	Բայանդուրյան Վլադիմիր	0,84704	08 մայիսի 2019	391336
5	Սիմոնյան Սիմոն	0,18	20 մայիսի 2019	83160
6	Ազիզյան Արտաշես	0,6409	20 մայիսի 2019	296098
7	Իսունց Գրետա	0,35802	24 մայիսի 2019	27580
8	Ազիզյան Արա	0,44228	03 հուլիսի 2019	271942
3	Ընդամենը	4,67849		2091268

Համայնքի ղեկավար՝ Մ. Զաքարյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ
ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

28 օգոստոսի 2019 թվական N64

ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 21-Ի N333 ՈՐՈՇՈՒՄԸ ԵՎ <<ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ>> ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՎԱՐԴԱՆԻՁՈՐԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ, ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ, ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 15-րդ և 28-րդ կետերով, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» օրենքի 9-րդ հոդվածի 5-րդ կետով, հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը՝ Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքի ավագանին

որոշում է՝

1.Հաստատել Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքի ղեկավարի 2019 թվականի օգոստոսի 21-ի ««Մեղրի համայնքի մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպության Վարդանիձորի մասնաճյուղ ստեղծելու մասին» N333 որոշումը:

2.Հաստատել «Մեղրի համայնքի մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպության Վարդանիձորի մասնաճյուղի կանոնադրությունը՝ համաձայն հավելված 1-ի:

3.Հաստատել «Մեղրի համայնքի մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպության Վարդանիձորի մասնաճյուղի աշխատողների քանակը, հաստիքացուցակը, պաշտոնային դրույքաչափերը՝ համաձայն հավելված 2-ի:

Կողմ (6) Դեմ(0) Ձեռնպահ(0)

ԱԴԱՄՅԱՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ _____
ԳԵՎՈՐԳՅԱՆ ԳԱԳԻԿ _____
ԳԵՎՈՐԳՅԱՆ ԽԱՉԱՏՈՒՐ _____
ՋԱՔԱՐՅԱՆ ՀՐԱՅՐ _____
ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ ՍՈՒՐԵՆ _____
ՄԻՔԱԵԼՅԱՆ ՍԱՄՎԵԼ _____

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Մ. ՋԱՔԱՐՅԱՆ

2019թ. օգոստոսի 28
ք. Մեղրի

Հավելված1
ՀՀ Սյունիքի մարզի Մեղրի համայնքի ավագանու
2019թ օգոստոսի 28 -ի N6Ֆորոշման

I.ԸՆԴՀԱՆՈՒՐԴՐՈՒՅԹՆԵՐ

1.<<Մեղրի համայնքի մանկապարտեզ>> համայնքային ոչ առևտրային կազմակերպության /այսուհետ՝հաստատության/ Վարդանիձորի մասնաճյուղը (այսուհետ մասնաճյուղ) շահույթ ստանալու նպատակ չհետապնդող, իրավաբանական անձի կարգավիճակ չունեցող առանձնացված ստորաբաժանում է, որն իրականացնում է նախադպրոցական կրթական ծրագրեր Մեղրի համայնքի Վարդանիձոր գյուղում, Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան ձեռք է բերում և իրականացնում սույն կանոնադրությամբ ամրագրված իր խնդիրների իրականացման համար անհրաժեշտ իրավունքներ և պարտականություններ:

2.Մասնաճյուղն իր գործունեության ընթացքում ղեկավարվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և սույն կանոնադրությամբ:

3.Մասնաճյուղի գտնվելու վայրն է՝ գյուղ Վարդանիձոր, 3-րդ փողոց,թիվ 22:

4. Մասնաճյուղը, որպես սեփականություն, չունի առանձնացված գույք:

5. Մասնաճյուղը կարող է ունենալ Հայաստանի Հանրապետության զինանշանի պատկերով և իր՝ հայերեն անվանմամբ կլոր կնիք, կարող է ունենալ իր անվանմամբ ձևաթղթեր, խորհրդանիշ և այլ անհատականացման միջոցներ:

6. Մասնաճյուղն չունի ինքնուրույն հաշվեկշիռ և բանկային հաշիվ:

7. Մասնաճյուղում չեն թույլատրվում քաղաքական և կրոնական կազմակերպությունների ստեղծումն ու գործունեությունը:

II. ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՌԱՐԿԱՆ ԵՎՆՊԱՏԱԿԸ

8. Մասնաճյուղի գործունեության առարկան և նպատակը նախադպրոցական կրթության ծառայության այլընտրանքային, ծախսարդյունավետ մոդելի կիրառմամբ նախադպրոցական կրթական բնույթի գործունեության իրականացումն է:

Մասնաճյուղի կրթական գործունեությունն իրականացվում է ի շահ անհատի, հասարակության և պետության:

9. Մասնաճյուղը, համագործակցելով ընտանիքի հետ, ապահովում է մասնաճյուղում ընդգրկված նախադպրոցական տարիքի երեխաների ներդաշնակ զարգացումն ու դաստիարակությունը, առողջության ամրապնդումն ու խնամքը, հայրենի լեզվով հաղորդակցվել և դրա հիմքի վրա օտար լեզուների տիրապետման նախադրյալները, հաշվել ու տարրական կարողությունների զարգացումը, վարվեցողության տարրական կանոններին, հայրենի բնության և բնապահպանության, պատմության և ազգային մշակույթի տարրերին ծանոթացումը, երեխայի մտավոր, բարոյական, գեղագիտական և ֆիզիկական զարգացման հիմքերի ստեղծումը, հայրենիքի նկատմամբ սիրո և նվիրվածության զգացման ձևավորումը, աշխատանքային տարրական կարողությունների և հմտությունների ծանոթացումը, զարգացման շեղումների կանխարգելումն ու շտկումը, դպրոցական ուսուցման նախապատրաստումը:

10. Մասնաճյուղի գործունեությունը հիմնվում է ժողովրդավարության, մարդասիրության, հանրամատչելիության, ազգային և համամարդկային արժեքների զուգորդման, անձի ազատ զարգացման, ինքնավարության կրթության աշխարհիկ բնույթի սկզբունքների վրա:

11. Մասնաճյուղը պատասխանատու է պետական չափորոշիչներին, նախակրթական պետական ծրագրերին, երեխաների տարիքային, ֆիզիոլոգիական և սոցիալ-

հոգեբանական զարգացման առանձնահատկություններին, հակումներին ու ընդունակություններին համապատասխան ուսուցման մեթոդների և ձևերի ընտրության, ինչպես նաև նրանց կյանքի անվտանգության և առողջության պահպանման համար:

12. Մասնաճյուղը կարող է զբաղվել հետևյալ ձեռնարկատիրական գործունեության տեսակներով՝

ա)լրացուցիչ վճարովի կրթական ծառայությունների կազմակերպում,

բ)մարզա-առողջարարական ծառայությունների կազմակերպում,

գ)զարգացման շեղումներով երեխաների համար հոգեբանական-շտկողական ծառայությունների կազմակերպում,

դ)երեխաների ձեռքի աշխատանքների ցուցահանդես-վաճառքի կազմակերպում:

III.ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ԿՐԹԱԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

13. Մասնաճյուղի երեխաների համակազմի համալրման կարգը և խմբերի առավելագույն խտությունը սահմանվում է պետական կրթական չափորոշիչներով:

14. Մասնաճյուղ ընդունվում են մինչև վեց տարեկան երեխաները՝ նախադպրոցական պետական կրթական չափորոշիչներով սահմանված տարիքային հենքի և անհատական զարգացման առանձնահատկությունների հիման վրա ձևավորված խմբերում: Տարիքային հենքի վրա խմբերի ձևավորման անհնարինության դեպքում ձևավորվում են տարատարիք (խառը) խմբեր, որոնց գործունեությունն իրականացվում է կրթության պետական կառավարման լիազոր մարմնի գերատեսչական ակտերի պահանջներին համապատասխան:

15. Մասնաճյուղում կրթադաստիարակչական գործունեությունը կազմակերպվում է Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության (այսուհետ՝ նախարարություն) կողմից երաշխավորված նախադպրոցական կրթության համալիր ծրագրին համապատասխան: Մասնաճյուղը կարող է մշակել, նախարարության հետ համաձայնեցնելով, իրականացնել նաև նախադպրոցական կրթության հեղինակային ծրագրեր:

16.Մասնաճյուղի աշխատանքային ռեժիմը, մասնաճյուղում երեխաների մնալու տևողությունը, կրթադաստիարակչական խմբերի համալրման և սննդի կազմակերպման կարգը որոշվում են նախարարության մեթոդական ցուցումներին համապատասխան:Թույլատրվում է մասնաճյուղի կամ առանձին խմբերի գործունեության կազմակերպումը ցերեկային, երեկոյան ժամերին, շուրջօրյա, հանգստյան և տոնական օրերին, ինչպես նաև երեխաների ազատ հաճախումը մասնաճյուղ:

17. Մասնաճյուղի երեխաների բժշկական սպասարկումն իրականացվում է հաստիքային բժշկական անձնակազմի միջոցով, որը տնօրինության հետ պատասխանատվություն է կրում երեխաների առողջության, ֆիզիկական զարգացման, բուժկանխարգելիչ միջոցառումների անցկացման, սանիտարահիգիենիկ նորմերի, ռեժիմի պահպանման և սննդի որակի համար:

IV. ԿՐԹԱԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԸ

18. Մասնաճյուղի կրթադաստիարակչական գործընթացի մասնակիցները երեխաներն են, ծնողները (օրինական ներկայացուցիչները), մանկավարժական աշխատողները:

19. Երեխաների ընդունելության ժամանակ մասնաճյուղի ղեկավարը պարտավոր է

ծնողներին (օրինական ներկայացուցիչներին) ծանոթացնել կանոնադրությանը և այլ փաստաթղթերի, որոնք կանոնակարգում են մասնաճյուղի գործունեությունը:
20. Մասնաճյուղի և ծնողների փոխհարաբերությունները կարգավորվում են նրանց միջև կնքված պայմանագրով՝ հաստատության տնօրենի վավերացմամբ:
21. Երեխայի և մասնաճյուղի աշխատակիցների փոխհարաբերությունները կառուցվում են համագործակցության, երեխայի անհատականության հանդեպ հարգանքի հիմքի վրա:
22. Մասնաճյուղում աշխատանքի ընդունվում են այն անձինք, ովքեր ունեն նախարարության հաստատած որակավորման բնութագրի պահանջներին համապատասխան անհրաժեշտ մասնագիտական-մանկավարժական որակավորում:
23. Մասնաճյուղի աշխատողների իրավունքները, սոցիալական երաշխիքներն ու արտոնությունները որոշվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան, մասնաճյուղի կանոնադրությամբ և աշխատանքային պայմանագրով:
24. Մասնաճյուղի աշխատողներն իրավունք ունեն սահմանված կարգով մասնակցելու մասնաճյուղի կառավարմանը, համատեղությամբ կատարելու գիտական, ստեղծագործական և մանկավարժական բնույթի աշխատանքներ:

V. ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ

25. Մասնաճյուղի կառավարումն իրականացնում են հիմնադիրը, նրա կողմից նշանակված գործադիր մարմինը՝ հաստատության տնօրենը և մասնաճյուղի ղեկավարը (այսուհետ՝ղեկավար):
26.Մասնաճյուղի հիմնադիրն ունի մասնաճյուղի գործունեությանը և կառավարմանը վերաբերող ցանկացած հարց վերջնական լուծելու իրավունք՝ բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի:
27.Համայնքի ղեկավարն իրականացնում է մասնաճյուղի ընդհանուր կառավարումը, ապահովում նրա բնականոն գործունեությունը և պատասխանատվություն է կրում դրանց չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար:
28.Հաստատության կանոնադրությամբ սահմանված կարգով, համայնքի ղեկավարի բոլոր լիազորությունները տարածվում են նաև մասնաճյուղի վրա:
29.Մասնաճյուղի ուսումնադաստիարակչական աշխատանքի արդյունավետ կազմակերպման նպատակով ձևավորվում է ծնողական խորհուրդ:
30.Ղեկավարն իրականացնում է մասնաճյուղի ընթացիկ գործունեության ղեկավարումը: Ղեկավարն օրենքներով, համայնքի ղեկավարի, ավագանու որոշումներով, սույն կանոնադրությամբ և իրեն վերապահված լիազորությունների սահմաններում, ղեկավարում է հաստատության գործունեությունն ու կրում պատասխանատվություն օրենքների, այլ իրավական ակտերի, համայնքի ղեկավարի որոշումների, սույն կանոնադրության և կնքված պայմանագրերի պահանջները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար:
31.Ղեկավարը՝
ա)առանց հաստատության տնօրենի լիազորագրի չի կարող ղեկավարել.
բ)մասնաճյուղի ղեկավարը կատարում է հաստատության տնօրենի օրենքով սահմանված կարգով բոլոր հրամանները, հրահանգները և որոշումները
գ)մասնաճյուղի ղեկավարը իր բոլոր գործողությունները համաձայնեցնում է հաստատության տնօրենի հետ:
32. Ղեկավարի բացակայության դեպքում, հաստատության տնօրենի գրավոր որոշման

(հրամանի) համաձայն, նրա լիազորություններն իրականացնում է այլ անձ:
33.Հաստատության մեթոդիստը (տնօրենի ուսումնական գծով տեղակալը) մասնաճյուղում՝
ա)իրականացնում է կրթադաստիարակչական աշխատանքի մեթոդական ղեկավարում.
բ)ապահովում և վերահսկում է տիպային ծրագրի դրույթների և մեթոդական հանձնարարականների կատարումը.
գ)պատասխանատու է կրթադաստիարակչական աշխատանքների որակի և արդյունքի համար.
դ)կազմակերպում է մասնաճյուղի մեթոդկաբինետի աշխատանքը.
ե)ուսումնասիրում է դաստիարակների առաջավոր փորձը և ընդհանրացնում այն.
զ)դաստիարակներին մշտապես հաղորդակից է դարձնում մանկավարժական գիտությունների նորույթներին, ծանոթացնում մեթոդական հանձնարարականներին.
է)կազմակերպում է աշխատանք ծնողների շրջանում:
34.Դաստիարակը՝
ա) պարտավոր է պահպանել երեխաների կյանքը, աշխատանք տանել նրանց առողջությունը ամրապնդման ուղղությամբ, զարգացնել նրանց ստեղծագործական երևակայությունը.
բ)պատասխանատու է երեխաների համակողմանի զարգացման և դաստիարակության համար.
գ)մշտապես համագործակցում է երեխայի ընտանիքի հետ, կազմակերպում աշխատանք ծնողների շրջանում:
35.Երաժշտական ղեկավարը՝
ա)տիպային ծրագրին համապատասխան, դաստիարակների հետ համատեղ իրականացնում է երեխաների երաժշտական դաստիարակությունը.
բ)ծնողների շրջանում խորհրդատվություն է կազմակերպում երեխաների երաժշտական, գեղագիտական դաստիարակության հարցերի շուրջ.
36.Տնտեսական մասի վարիչը (տնօրենի տնտեսական աշխատանքի գծով օգնականը)՝
ա)կազմակերպում է մասնաճյուղի տնտեսական սպասարկումը, անհրաժեշտ մթերքի, գույքի և սարքավորումների ստացումն ու պահպանությունը.
բ)մասնակցում է ճաշացուցակի և սննդամթերքի պահանջագիր-հայտերի կազմմանը.
գ)հետևում է մասնաճյուղի տեղամասի, շենքի, գույքի և սարքավորումների վիճակին, միջոցներ է ձեռնարկում դրանք ժամանակին վերանորոգելու համար.
դ)պատասխանատու է սպասարկող անձնակազմի աշխատանքային և կատարողական կարգապահության համար:

VI. ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ԳՈՒՅՔԸ ԵՎ ՖԻՆԱՆՍԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

37.Հաստատության տնօրենը՝ մասնաճյուղի հայտերի հիման վրա, յուրաքանչյուր ուստարվա համար մասնաճյուղի օգտագործմանն է հանձնում անհրաժեշտ գույք:
38.Մասնաճյուղի սեփականության պահպանման հոգսը կրում է հաստատությունը:
39.Հաստատության տնօրենն իրավունք ունի հետ վերցնելու իր կողմից մասնաճյուղին ամրացված գույքը:

VII .ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ՎԵՐԱԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ԵՎ ԼՈՒԾԱՐՈՒՄԸ

40.Մասնաճյուղը վերակազմակերպվում և լուծարվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

Հավելված 2
ՀՀ Սյունիքի Մեղրի համայնքի ավագանու
2019 թվականի օգոստոսի 28 N 64 որոշման

ՀԱՍՏԻՔԱՅԻՆ ՑՈՒՑԱԿ, ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐ, ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ՔԱՆԱԿ <<ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ>> ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՎԱՐԴԱՆԻՁՈՐԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂ

1.Աշխատողների քանակը՝ 6
2.Հաստիքացուցակ և պաշտոնային դրույքաչափերը՝

Պաշտոնների անվանումը	Հաստիքային միավորների թիվը	Դրույքաչափը	Հավելավճար	Ամսական աշխատավարձ	Ընդամենը տարեկան աշխատավարձ ֆոնդ
Մանկավարժական դրույքներ					
Մասնաճյուղի ղեկավար	1	77904	0	77904	311616
Դաստիարակ	0,5	77904	0	38952	155808
Երաժշտ.դաստիարակ	0,25	77904	0	19476	77904
Ընդամենը	**1,75**			**58428**	**233712**
Սպասարկող անձնակազմ					
Դաստիարակի օգնական	1	77904	0	77904	311616
Բուժքույր	0,25	77904	0	19476	77904
Խոհարար	1	77904	0	77904	311616
Ընդամենը	**2,25**		**0**	**175284**	**701136**
Ընդամենը	***4***		***0***	***233712***	***934848***

Տնօրեն /Սյուզան Սարգսյան/

Հաշվապահ /Սիրանուշ Գրիգորյան/

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ
ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
28 օգոստոսի 2019 թվական N65-Ն
ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 29-Ի N 2-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի առաջին մասի 5-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածով, «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» օրենքի 29-րդ հոդվածի 5-րդ մասով, 33-րդ հոդվածի 4-րդ մասով, հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը՝ Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքի ավագանին

որոշում է՝

1.Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքի ավագանու 2019 թվականի հունվարի 29-ի «ՀՀ Սյունիքի մարզի Մեղրի համայնքի 2019 թվականի բյուջեն հաստատելու մասին» թիվ 2-Ն որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները,
1)Որոշման 3-րդ կետի 2-րդ հատվածում (համայնքի բյուջեի ծախսերը՝ ըստ բյուջետային ծախսերի գործառնական դասակարգման) կատարել փոփոխություններ և լրացումներ համաձայն հավելված 1-ի.
2)Որոշման 4-րդ կետի 3-րդ հատվածում (համայնքի բյուջեի ծախսերը ըստ տնտեսագիտական դասակարգման) կատարել փոփոխություններ և լրացումներ համաձայն հավելված 2-ի.
3)Որոշման 7-րդ կետի 6-րդ հատվածում (համայնքի բյուջեի ծախսերը՝ ըստ գործառնական և տնտեսագիտական դասակարգման) կատարել փոփոխություններ և լրացումներ համաձայն հավելված 3-ի:
2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ (6)	Դեմ(0)	Ձեռնպահ(0)
ԱԴԱՄՅԱՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ		
ԳԵՎՈՐԳՅԱՆ ԳԱԳԻԿ		
ԳԵՎՈՐԳՅԱՆ ԽԱՉԱՏՈՒՐ		
ՋԱՔԱՐՅԱՆ ՀՐԱՅՐ		
ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ ՍՈՒՐԵՆ		
ՄԻՔԱԵԼՅԱՆ ՍԱՄՎԵԼ		

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Մ. ՋԱՔԱՐՅԱՆ

2019թ. օգոստոսի 28
ք. Մեղրի

Հավելված N1
ՀՀ Սյունիքի մարզի
Մեղրի համայնքի ավագանու
2019 թվականի օգոստոսի 28-ի N65-Ն որոշման

ՀԱՏՎԱԾ 2
ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻ ԾԱԽՍԵՐԸ ԸՍՏ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ
ԾԱԽՍԵՐԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ԴԱՍԱԿԱՐԳՄԱՆ

2019 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 29-Ի <<ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ>> N 2-Ն ՈՐՈՇՄԱՆ 2-ՐԴ ՀԱՏՎԱԾՈՒՄ ԿԱՏԱՐՎՈՂ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐԸ

հազ.դրամ

Տողի NN	Բաժին	Խումբ	Դաս	Բյուջետային ծախսերի գործառնական դասակարգման բաժինների, խմբերի և դասերի անվանումները	Ընդամենը (ս.7+ս.8)	այդ թվում՝	
						վարչական բյուջե	ֆոնդային բյուջե
1	2	3	4	5	6	7	8
2111	1	1	1	Օրենսդիր և գործադիր մարմիններ, պետական կառավարում	1400.0	1400.0	00.0
2161	1	6	1	Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ (այլ դասերին չպատկանող)	-15137.2	0.0	-15137.2
2861	8	6	1	Հանգիստ, մշակույթ և կրոն (այլ դասերին չպատկանող)	13337.2	0.0	13337.2
2911	9	1	1	Նախադպրոցական կրթություն	1800.0	0.0	1800.0
3071	10	7	1	Սոցիալական հատուկ արտոնություններ (այլ դասերին չպատկանող)	2091.268	2091.268	0.0
3112	11	1	2	ՀՀ համայնքների պահուստային ֆոնդ	-3491.268	-3491.268	0.0

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՄԽԻԹԱՐ ԶԱՔԱՐՅԱՆ

Հավելված N2
ՀՀ Սյունիքի մարզի
Մեղրի համայնքի ավագանու
2019 թվականի օգոստոսի 28-ի N65-Ն որոշման

ՀԱՏՎԱԾ 3
ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻ ԾԱԽՍԵՐԸ ԸՍՏ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ
ԾԱԽՍԵՐԻ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ԴԱՍԱԿԱՐԳՄԱՆ

2019 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 29-Ի <<ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ>> N 2-Ն ՈՐՈՇՄԱՆ 3-ՐԴ ՀԱՏՎԱԾՈՒՄ ԿԱՏԱՐՎՈՂ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐԸ

հազ.դրամ

Տողի NN	Բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածների անվանումները	NN	Ընդամենը (ս.5+ս.6)	այդ թվում	
				վարչական մաս	ֆոնդային մաս
1	2	3	4	5	6
4238	-Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ	4239	400.0	400.0	x
4264	-Տրանսպորտային նյութեր	4264	1000.0	1000.0	x
4634	-Այլ նպաստներ բյուջեից	4729	2091.268	2091.268	x
4771	-Պահուստային միջոցներ	4891	-3491.268	-3491.268	x
5113	-Շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում	5113	-2760.0	x	-2760.0
5122	-Վարչական սարքավորումներ	5122	1800.0	x	1800.0
5134	-Նախագծահետազոտական ծախսեր	5134	960.0	x	960.0

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՄԽԻԹԱՐ ԶԱՔԱՐՅԱՆ

Հավելված N3
ՀՀ Սյունիքի մարզի
Մեղրի համայնքի ավագանու
2019 թվականի օգոստոսի 28-ի N65 -Ն որոշման

ՀԱՏՎԱԾ 6
ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻ ԾԱԽՍԵՐԸ ԸՍՏ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ
ԾԱԽՍԵՐԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ԵՎ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ԴԱՍԱԿԱՐԳՄԱՆ

2019 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 29-Ի <<ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ>> N 2-Ն ՈՐՈՇՄԱՆ 6-ՐԴ ՀԱՏՎԱԾՈՒՄ ԿԱՏԱՐՎՈՂ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐԸ

հազ.դրամ

Տողի NN	Բաժին	Խումբ	Դաս	Բյուջետային ծախսերի գործառնական դասակարգման բաժինների, խմբերի, դասերի, ինչպես նաև բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածների անվանումները	Տնտեսա-գիտական դասակարգ-ման հոդված	Ընդամենը (ս.8+ս.9)	այդ թվում՝	
							վարչական բյուջե	ֆոնդային բյուջե
1	2	3	4	5	6	7	8	9
2111	1	1	1	Օրենսդիր և գործադիր մարմիններ, պետական կառավարում		1400.0	1400.0	0.0
				-Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ	4239	400.0	400.0	x
				-Տրանսպորտային նյութեր	4264	1000.0	1000.0	x
2161	1	6	1	Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ (այլ դասերին չպատկանող)		-15137.2	0.0	-15137.2
				- Շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում	5113	-16097.2	x	-16097.2
				Նախագծահետազոտական ծախսեր	5134	960.0	x	960.0
2861	8	6	1	Հանգիստ, մշակույթ և կրոն (այլ դասերին չպատկանող)		13337.2	0.0	13337.2
				- Շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում	5113	13337.2	x	13337.2
2911	9	1	1	Նախադպրոցական կրթություն		1800.0	0.0	1800.0
				- Վարչական սարքավորումներ	5122	1800.0	x	1800.0
3071	10	7	1	Սոցիալական հատուկ արտոնություններ (այլ դասերին չպատկանող)		2091.268	2091.268	0.0
				-Այլ նպաստներ բյուջեից	4729	2091.268	2091.268	x
3112	11	1	2	ՀՀ համայնքների պահուստային ֆոնդ		-3491.268	-3491.268	0.0
				-Պահուստային միջոցներ	4891	-3491.268	-3491.268	x

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՄԽԻԹԱՐ ԶԱՔԱՐՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ
ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
28 օգոստոսի 2019 թվական N66
<<ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ>> ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետ, 46-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետ, <<Աշխատանքային օրենսգրքի>> 186-րդ հոդվածով, հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը՝ Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքի ավագանին

որոշում է՝

Հաշվի առնելով, որ ք. Մեղրի, Ադելյան 5 հասցեում, <<Մեղրի համայնքի մանկապարտեզ>> ՀՈԱԿ-ին պատկանող շենքում նախատեսվում են հիմնանորոգման աշխատանքներ, ինչի հետևանքով սեպտեմբերի 1-ից հնարավոր չէ նշված շենքում կազմակերպել մինչև 6* տարեկան երեխաների կրթադաստիարակչական գործունեությունը, ուստի կրթական պետական կառավարման լիազորված մարմնի հաստատած նախադպրոցական կրթական պետական չափորոշիչներին համապատասխան կրթական ծրագրերի յուրացմանը ավագ խմբերի սաների կողմից ապահովելու նպատակով,մինչև շինարարական աշխատանքների ավարտը թույլատրել համայնքի ղեկավարին՝

1.<<Մեղրի համայնքի մանկապարտեզ>> ՀՈԱԿ-ում օրենքով սահմանված գործունեության ուղղություններից, այն է՝ նախադպրոցական կրթական ծրագրերի իրականացում և երեխաների խնամքի ապահովում, իրականացնելու միայն՝ կրթական ծրագրերի իրականացում ավագ խմբերում:

2.<<Մեղրի համայնքի մանկապարտեզ>> ՀՈԱԿ-ի գործունեությունը կազմակերպել ք.Մեղրի Օհանջանյան 4/1, 4/2 հասցեում <<Մեղրի տարածաշրջանային բժշկական կենտրոն>> ՓԲԸ-ի հաշվեկշռում գտնվող նախկին պոլիկլինիկայի շենքի առաջին հարկի հինգ սենյակներում:

3.<<Մեղրի համայնքի մանկապարտեզ>> ՀՈԱԿ-ի այն աշխատողներին, ովքեր ներգրավված չեն մանկապարտեզի գործունեության մեջ, համարել պարապուրդում և վճարումը կատարել օրենքով սահմանված կարգով:

4.Մանկապարտեզի ծառայություններից օգտվողների համար՝ համայնքի կողմից մատուցված ծառայությունների դիմաց փոխհատուցման գումարը չհաշվարկել և չգանձել:

Կողմ (6) Դեմ(0) Ձեռնպահ(0)

ԱԴԱՄՅԱՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ
ԳԵՎՈՐԳՅԱՆ ԳԱԳԻԿ
ԳԵՎՈՐԳՅԱՆ ԽԱՉԱՏՈՒՐ
ԶԱՔԱՐՅԱՆ ՀՈՎՅՐ
ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ ՍՈՒՐԵՆ
ՄԻՔԱԵԼՅԱՆ ՍԱՄՎԵԼ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Մ. ԶԱՔԱՐՅԱՆ

2019թ. օգոստոսի 28
ք. Մեղրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ
ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

28 օգոստոսի 2019 թվական N67

ՄԵՂՐԻ ԲԱԶՄԱԲՆԱԿԱՎԱՅՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՂԲԱՀԱՆՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՊԼԱՆԻՆ ՀԱՎԱՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով, հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը՝ Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքի ավագանին

որոշում է՝

Հավանություն տալ ԵՄ-ի կողմից ֆինանսավորվող «Բնապահպանական մարտահրավերների վերածումը հնարավորությունների. պլաստիկ թափոններից շինարարական նյութերի ստացում» ծրագրի շրջանակներում կազմված «Մեղրի բազմաբնակավայր համայնքի աղբահանության կառավարման ռազմավարական պլան»-ին՝ համաձայն հավելվածի:

Կողմ (6)		Դեմ(0)	Ձեռնպահ(0)
ԱԴԱՄՅԱՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ	----------		
ԳԵՎՈՐԳՅԱՆ ԳԱԳԻԿ	----------		
ԳԵՎՈՐԳՅԱՆ ԽԱՉԱՏՈՒՐ	----------		
ՁԱՔԱՐՅԱՆ ՀՐԱՅՐ	----------		
ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ ՍՈՒՐԵՆ	----------		
ՄԻՔԱԵԼՅԱՆ ՍԱՄՎԵԼ	----------		

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Մ. ՁԱՔԱՐՅԱՆ

2019թ. օգոստոսի 28
ք. Մեղրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ
ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
28 օգոստոսի 2019 թվական N68-Ն
ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԱՂԲԱՀԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ, ՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ ՄԱՔՐՄԱՆ ՍԽԵՄԱՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 20-րդ կետով, «Աղբահանության և սանիտարական մաքրման մասին» օրենքի 10-րդ հոդվածի 4-րդ կետով, 8-րդ, 13-րդ հոդվածներով և հաշվի առնելով համայնքի ղեկավարի առաջարկությունը՝ Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքի ավագանին

որոշում է՝

1.Հաստատել Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքի աղբահանության իրականացման կարգը՝ համաձայն N1 հավելվածի:
2.Հաստատել Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքի սանիտարական մաքրման սխեման՝ համաձայն N2 հավելվածի:
3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Կողմ (6) Դեմ(0) Ձեռնպահ(0)
ԱԴԱՄՅԱՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ
ԳԵՎՈՐԳՅԱՆ ԳԱԳԻԿ
ԳԵՎՈՐԳՅԱՆ ԽԱՉԱՏՈՒՐ
ԶԱՔԱՐՅԱՆ ՀՐԱՅՐ
ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ ՍՈՒՐԵՆ
ՄԻՔԱԵԼՅԱՆ ՍԱՄՎԵԼ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Մ. ԶԱՔԱՐՅԱՆ

2019թ. օգոստոսի 28
ք. Մեղրի

Հավելված 1
ՀՀ Սյունիքի մարզի Մեղրի համայնքի
Ավագանու 2019 թվականի օգոստոսի 28-ի
N68-Ն որոշման

ԿԱՐԳ
ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԱՂԲԱՀԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ

1.Սույն կարգով կարգավորվում է Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքի տարածքում աղբահանության աշխատանքների իրականացման կազմակերպման հետ կապված հարաբերությունները:

2.Համայնքի տարածքում աղբահանության աշխատանքների իրականացման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են ՀՀ Սահմանադրությամբ, <<Տեղական ինքնակառավարման մասին>>, <<Թափոնների մասին>>, <<Աղբահանության և սանիտարական մաքրման մասին>>, Հայաստանի Հանրապետության օրենքներով և այլ իրավական ակտերով:

3.Համայնքի տարածքում աղբահանությունը պարտադիր և պարբերաբար իրականացվող աշխատանք է, որը իր ուժերով և տեխնիկական միջոցներով իրականացնում է <<Մեղրի կոմունալ տնտեսություն, բարեկարգում>> համայնքային ոչ առևտրային կազմակերպությունը՝ օրենսդրությամբ սահմանված սանիտարահիգիենիկ կանոնների և նորմերի պահանջների պահպանմամբ, որպես սկզբունք ընդունելով՝

1) մարդու առողջության և շրջակա միջավայրի վրա աղբի բացասական (վտանգավոր) ներգործության նվազեցումը և չեզոքացումը.
2) բնակչության համար հարմարավետ և էկոլոգիապես անվտանգ պայմանների ապահովումը,
3) տարածքների աղտոտման, աղբակույտերի առաջացման անթույլատրելիությունը և տարածքների մաքրումը աղբից,
4) աղբահանության վերաբերյալ տեղեկատվության մատչելիության և հանրային իրազեկվածության ապահովումը,
5) մաքրման աշխատանքերի մեքենայացումը:

4. Համայնքում աղբահանությունը կատարվում է համայնքի ավագանու (այսուհետ՝ Ավագանի) հաստատած սխեմայով տեղադրված աղբարկղներում, կոնտեյներներում կենցաղային աղբը կուտակելու և հեռացնելու միջոցով Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կանոնների և նորմերի պահանջներին համապատասխան:
5. Աղբահանության իրականացման կարգը, այդ թվում՝ աղբահանության իրականացման նվազագույն ժամանակացույցը, աղբամանների կամ կոնտեյներների տեղադրման վայրերը, դրանց տեսակները և քանակը համայնքի ղեկավարի ներկայացմամբ հաստատում է համայնքի ավագանին՝ պահպանելով Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված սանիտարահիգիենիկ կանոնները և նորմերի պահանջները: Ընդ որում, աղբը պետք է փոխադրվի մինչև կոնտեյներների ամբողջությամբ լցվելը:
6. Աղբի փոխադրման իրականացումը պետք է կազմակերպվի՝ նվազագույնի հասցնելով շրջակա միջավայրի աղտոտումը:Աղբարկղերից և աղբամաններից աղբի հեռացնելու ժամանակ աղբահանություն իրականացնող կազմակերպության կողմից մաքրվում և տեղափոխվում է աղբարկղերի հարակից տարածքի աղբը: Աղբավայրերում աղբի

տեղադրումն իրականացվում է աղբավայրերի շահագործման և սանիտարահիգիենիկ կանոնների պահանջների պահպանմամբ:Արգելվում է աղբը պահել և թափել դրա համար չսահմանված և չնախատեսված վայրերում:
7.Համայնքի տարածքում աղբահանության կազմակերպումն իրականացվում է ինքնաթափ բեռնատարի և անվավոր տրակտորային փոխադրամիջոցների միջոցով, որոնք համապատասխանում են օրենսդրությամբ հաստատված նորմերին: Աղբահանությունը համայնքում իրականացվում է սահմանված ներհամայնքային ճանապարհներով և մայրուղիներով :Աղբը տեղափոխվում է աղբավայր, որը գտնվում է համայնքի հսկողության ներքո: Մեղրի համայնքում շահագործվում է 2 աղբավայր:Վերջիններս գտնվում են Մեղրի քաղաքից հյուսիս- արևմուտք ընկած հատվածում, որը քաղաքից հեռու է 5 կմ , Ագարակ քաղաքից հյուսիս-արևելք ընկած հատվածում, որը քաղաքից հեռու է 5 կմ:Աղբավայրերի խնամքը՝ դրանց հարթեցումը, հողով ծածկումը մտնում է աղբահանություն իրականացնող կազմակերպության պարտականությունների մեջ:Աղբավայրերում աղբի տեղադրումն իրականացվում է աղբավայրերի շահագործման և սանիտարահիգենիկ կանոնների պահանջների պահպանմամբ:

8.Աղբամանները տեղադրվում են համայնքի նախատեսված վայրերում, այնպես, որ աղբահանություն իրականացնողը հնարավորություն ունենա պատշաճ հավաքել և տեղափոխել աղբը:

9.Աղբատար փոխադրամիջոցների թափքերը ախտահանվում են աղբի թափման վայրում աղբահանություն իրականացնող կազմակերպության կողմից:

10.Աղբահանություն իրականացնող կազմակերպությունը պատասխանատու է աղբահանության կազմակերպման ամենօրյա աշխատանքների համար, օրենքով սահմանված կարգով պատասխանատվություն է կրում պարտավորությունների չկատարման և ոչ պատշաճ կատարման համար:

11.Աղբահանությունը իրականացնող կազմակերպության պարտավորությունների կատարման նկատմամբ վերահսկողությունն իրականացնում է համայնքի ղեկավարը կամ նրա լիազորած անձը (մարմինը):

12.Մեղրի համայնքի տարածքում ոչ կենցաղային և խոշոր աղբի հավաքման և փոխադրման թույլտվությունը տրամադրում է համայնքի ղեկավարը համայնքի ավագանու հաստատած պայմաններով և կարգով:

13.Մեղրի համայնքի և (կամ) սանիտարական մաքրման ծառայություններ մատուցող կազմակերպությունը կամ անհատ ձեռնարկատերը կարող է իրականացնել խոշոր եզրաչափերի աղբի հավաքումը և փոխադրումը համայնքի ավագանու հաստատած դրույքաչափերին համապատասխան:

14.Իրավաբանական անձը կամ անհատ ձեռնարկատերը, համայնքի ավագանու սահմանած պահանջներին համապատասխան, կարող է իրականացնել շինարարական և խոշոր եզրաչափի աղբի հավաքումը և փոխադրումը՝ աղբի հավաքման և փոխադրման թույլտվության հիման վրա:

15.Աղբի հավաքման և փոխադրման թույլտվություններ կարող են տրամադրվել նաև շինարարական և խոշոր եզրաչափի աղբի աղբահանության վճար վճարողներին՝ աղբն ինքնուրույն հավաքելու և փոխադրելու համար:

16.Աղբի հավաքման և փոխադրման թույլտվության տրամադրման պայմանները և կարգը պետք է ուղղված լինեն սույն կարգով նախատեսված նպատակներին և սկզբունքներին, ինչպես նաև սույն կարգով նախատեսված ժամանակացույցին համապատասխան աղբահանության իրականացման ապահովմանը:

17.Թույլտվություն ստանալու համար հայտատուն համայնքի ղեկավարին է ներկայացնում հայտ:Թույլտվություն տրամադրելու մասին հայտի բավարարումը

ձևակերպվում է համայնքի ղեկավարի որոշման հիման վրա :Թույլտվություն տալու համար հայտատուից գանձվում է տեղական տուրք՝համաձայն համայնքի ավագանու կողմից սահմանված տեղական տուրքերի և վճարների դրույքաչափին և <<Տեղական տուրքերի և վճարների մասին>> օրենքին համապատասխան:Տեղական տուրքի վճարումն հավաստող անդորրագրի և հայտի ստանալուն հաջորդող 5 օրվա ընթացքում հաստատված թույլտվությունը հանձնվում է հայտատուին :Թույլտվություն տրամադրելու մասին հայտը մերժվում է, եթե հայտատուի ներկայացրած փաստաթղթերը թերի են: Հայտը գրավոր մերժվում է մուտքագրման օրվանից 5 օրվա ընթացքում :Հայտը մերժելու դեպքում պետք է հստակ նշվեն մերժման իրավական հիմքերը:Թույլտվությունը չի կարող հայտատուի կողմից փոխանցվել այլ անձի:
18.Աղբահանությունը և սանիտարական մաքրումը պարտադիր և պարբերաբար իրականացվող աշխատանքներն են՝ օրենսդրությամբ սահմանված սանիտարահիգիենիկ կանոնների և նորմերի պահանջների պահպանմամբ:Աղբահանությունը Մեղրի համայնքում իրականացվում է համաձայն հետևյալ նվազագույն ժամանակացույցի (հավելված 1.1 և հավելված 1.2):

Մետաղական աղբամանների գտնվելու վայրերը՝

Գյուղ Լիճք - 8 հատ
Առաջին փողոց – 1 հատ (N 76)
Առաջին փողոց – 1 հատ (N 64)
Առաջին փողոց - 1 հատ (N 62)
Երկրորդ փողոց – 1 հատ (N 61)
Երկրորդ փողոց - 1 հատ (առանց համար)
Չորրամասին հարակից տարածք - 3 հատ (առանց համար)
Գյուղ Տաշտուն - 10 հատ
Առաջին փողոց - 1 հատ (N 80)
Առաջին փողոց - 4 հատ (N 79,N 78,N 63,N 62)
Երկրորդ փողոց - 1 հատ (N 77)
Երկրորդ փողոց -1 հատ (N 60)
Չորրորդ փողոց - 1 հատ (N 67)
Հուշաղբյուրներ - 2 հատ (առանց համար)
Գյուղ Լեհվազ - 28 հատ
Սոսի աղբյուր կոչվող տարածք - 1 հատ (N 120)
Լեհվազ-Վարդանիձոր ավտոճանապարհի 2-րդ կմ - 1 հատ (N 83)
Գոգոշի աղբյուր կոչվող տարածք - 1 հատ (N 95)
Սիմոնի աղբյուր կոչվող տարածք - 1 հատ (N 84)
6-րդ փողոց - 5 հատ (N 81,N 82,N 90,N 75, N 74)
4-րդ փողոց 1 նրբ.- 3 հատ (N 71,N 87,N 100)
5-րդ փողոց – 3 հատ (N 93,N 91,N 130)
5-րդ փողոց- 2 հատ (առանց համար)
3-րդ փողոց- 11 հատ (N 88,N 89,N 85,N 96,N 97,N 110,N 73,N 72,N 99,N 98,N 86)
Գյուղ Վարդանիձոր – 28 հատ
Վլիի աղբյուր կոչվող տարածք - 1 հատ (N 109)
Վարդանիձորի-Թխկուտ ավտոճանապարհի 0,3 կմ - 2 հատ (առանց համար)
Վարդանիձոր գյուղ - 12 հատ (առանց համար)
Վարդանիձորի հրապարակ - 3 հատ (առանց համար)
1-ին փողոց - 5 հատ (առանց համար)
3-րդ փողոց - 2 հատ (առանց համար)

Կանգառ - 2 հատ (առանց համար)
Վարդանիձոր-Թխկուտ ավտոճանապարհի 0,8 կմ- 1 հատ (N 92)
Գյուղ Թխկուտ - 1 հատ (N 140)
Լիճքվազ- 2 հատ (N 77, N 94)
Այգեձոր- 2 հատ (առանց համար)
Գյուղ Վարհավար - 8 հատ
Ալյոշայի հուշաղբյուր կոչվող տարածք – 1հատ (N 143)
Ղազարի հուշաղբյուր կոչվող տարածք – 1 հատ (N 132)
Ներսեսի հուշաղբյուր կոչվող տարածք – 1 հատ (N 141)
Կանգառ – 1 հատ (N 123)
Առաջին փողոց – 2 հատ (N 142, N 122)
Մշակույթի պալատին հարակից տարածք -1 հատ (N 133)
Մամու Խաչ կոչվող տարածք – 1 հատ (N 124)
Գյուղ Գուդեմնիս - 3 հատ
Կանգառ- 1 հատ (N 134)
9-րդ փողոց- 2 հատ (N 144, N 145)
Գյուղ Շվանիձոր - 19 հատ
Առաջին փողոց – 5 հատ (N 43, N 56, N 70, N 45, N 69)
Առաջին փողոց 2-րդ նրբանցք – 1 հատ (N 68)
ՌԴ Սահմանապահ զորքերի 4-րդ ուղեկալին հարակից տարածք-2 հատ (առանց համար)
Չորրորդ փողոց – 6 հատ (N 51, N 55, N 69, N 52, N 53, N 44)
Գյուղի Հրապարակ – 1 հատ (N 54)
Ս.Միքայելյան փողոց – 2 հատ (առանց համար)
Կապան-Շվանիձոր ավտոճանապարհի հարակից տարածք – 1 հատ (առանց համար)
Գերեզմաներ տանող ճանապարհ – 1 հատ (առանց համար)
Գյուղ Ալվանք - 17 հատ
Առաջին փողոց- 3 հատ (առանց համար)
Առաջին փողոց- 1 հատ (N 48)
Երկրորդ փողոց- 1 հատ (N 40)
Երրորդ զաստավ- 2 հատ (առանց համար)
Երրորդ փողոց- 1 հատ (N 49)
Երրորդ փողոց փակուղի 2 - 1 հատ (N 50)
Երրորդ փողոց փակուղի 1 - 2 հատ (N 58, N 47)
Չորրորդ փողոց- 1 հատ (N 60)
Չորրորդ փողոց- 2 հատ (N 59, N 57)
Չորրորդ փողոց- 1 հատ (N 46)
Չորրորդ փողոց փակուղի 1- 2 հատ (առանց համար)

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Մ. ՉԱՔԱՐՅԱՆ

Հավելված 1.1
ՀՀ Սյունիքի մարզի Մեղրի համայնքի
ավագանու 2019 թվականի օգոստոսի 28 -ի
N68-Ն որոշման

Ազարակ քաղաքի աղբահանության ժամանակացույց

Ժամ	Շաբաթվա օրեր	Փողոցների անվանումներ
7:30-12:00 2:30-19:00	I	Մաքսատուն, պ/մ կոմբինատ, տնտեսվարող սուբյեկտներ, բազմաբնակարան շենքեր,գ.Կարճևան
7:30-12:00 2:30-19:00	II	Ավան թաղամաս , տնտեսվարող սուբյեկտներ, առանձնատներ
7:30-12:00 2:30-19:00	III	Բազմաբնակարան շենքեր, տնտեսվարող սուբյեկտներ, մանկապարտեզ,դպրոց,հիվանդանոց, դպրոց
7:30-12:00 2:30-19:00	IV	Բազմաբնակարան շենքեր, տնտեսվարող սուբյեկտներ, մաքսատուն, ավան թաղամաս,գ.Կարճևան
7:30-12:00 2:30-19:00	V	Պ/մ կոմբինատ, տնտեսվարող սուբյեկտներ, մանկապարտեզ,դպրոց,հիվանդանոց, բազմաբնակարան շենքեր
7:30-12:00 2:30-19:00	VI	Բազմաբնակարան շենքեր, տնտեսվարող սուբյեկտներ,ավան թաղամաս փ.Աբովյանից աջ
7:30-12:00 2:30-19:00	VII	Բազմաբնակարան շենքեր, տնտեսվարող սուբյեկտներ, առանձնատներ, ավան թաղամաս փ.Աբովյանից ձախ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Մ. ԶԱՔԱՐՅԱՆ

Հավելված 1.2
ՀՀ Սյունիքի մարզի Մեղրի համայնքի
ավագանու 2019 թվականի օգոստոսի 28 -ի
N68-Ն որոշման

Մեղրի քաղաքի աղբահանության ժամանակացույց

Ժամ	Շաբաթվա օրեր	Փողոցների անվանումներ
8:00-12:30 14:00:17:00	I	Ադելյան,Զ.Անդրանիկ,տնտ.սուբ.,Փարամազ,Քարակերտ.գործ-ին ,Մ.Օհանջանյան,Մեժլումյան,Մեղրու բժկ.,23/93 ԶՄ,Լեհվազի մայրուղի
8:00-12:30 14:00:17:00	II	Ադելյան,Զ.Անդրանիկ,տնտեսվարող սուբյ.,Փարամազ,Քարակերտ.գործ-ին ,Մ.Օհանջանյան,Մեժլումյան,Մեղրու բժկ.,23/93 ԶՄ,Արաքսաշեն,Հայրենադարձներ,N2 ԶՄ,գ.Վարհավար,գ.Գուդեմնիս,գ.Կուրիս
8:00-12:30 14:00:17:00	III	Ադելյան,Զ.Անդրանիկ,տնտեսվարող սուբյեկտներ,Փարամազ, Լեհվազի մայրուղի
8:00-12:30 14:00:17:00	IV	Ադելյան,Զ.Անդրանիկ,տնտեսվարող սուբյեկտներ,գործարանային,Քարակերտ,Մեժլումյան,Մեղրու բժկ., 23/93 ԶՄ,գ.Լիճք,գ.Տաշտուն,գ.Ալվանք,գ.Շվանիձոր
8:00-12:30 14:00:17:00	V	Ադելյան,Զ.Անդրանիկ,տնտեսվարող սուբյեկտներ,Փարամազ Լեհվազի մայրուղի
8:00-12:30 14:00:17:00	VI	Ադելյան,Զ.Անդրանիկ,Մեժլումյան,տնտեսվարող սուբյեկտներ,Քարակերտ,Հայրենադարձների,N2 զաստավ,Արաքսաշեն, Մեղրու բժկ., 23/93 ԶՄ
8:00-12:30 14:00:17:00	VII	Ադելյան,Զ.Անդրանիկ,տնտեսվարող սուբյեկտներ,գործարանային,Քարակերտ,Մեժլումյան,Մեղրու բժկ., 23/93 ԶՄ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Մ. ԶԱՔԱՐՅԱՆ

Հավելված 2
ՀՀ Սյունիքի մարզի Մեղրի համայնքի
ավագանու 2019 թվականի օգոստոսի 28-ի
N68-Ն որոշման

ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ ՄԱՔՐՄԱՆ ՍԽԵՄԱ

Սանիտարական մաքրման սխեման պարունակում է հետևյալ հիմնական տարրերը. համայնքում առաջացող աղբի ծավալների մոտավոր հաշվարկը, սանիտարական մաքրման ենթակա տարածքները, սանիտարական մաքրման աշխատանքների ծավալները, աղբի հավաքման, պահման, փոխադրման, տեղադրման, տեսակավորման և վնասազերծման ձևերն ու մեթոդները, անհրաժեշտ մեքենա-մեխանիզմներին ներկայացվող պահանջները, սանիտարական մաքրման ենթակա հուշարձանների տեղակայումը:

Մեղրի համայնքում սանիտարական մաքրումը ներառում է համայնքի ընդհանուր օգտագործման տարածքների (փողոցների, այգիների, պուրակների, հրապարակների, բակերի, մայթերի, անցումների, կամուրջների, սիզամարգերի, լողափերի և ընդհանուր օգտագործման այլ տարածքների) մաքրումը աղբից, տերևակույտերից, փոշուց, կենդանիների դիակներից և փողոցների երթևեկելի մասերի ջրում-լվացումը, փողոցների, կամուրջների, անցումների և մայթերի՝ ձյունից և սառույցից մաքրումը, համայնքի ընդհանուր օգտագործման համար տեղադրված աղբամանների սպասարկումը. Սանիտարական մաքրման աշխատանքները, կապված տարվա եղանակներից, իրենց բնույթով և խնդիրներով տարբեր են, այն սահմանափակվում է ամառային և ձմեռային մաքրմամբ:

Ամառային մաքրում.

Այն իր մեջ ընդգրկում է մաքրման ձեռքի աշխատանքի և մեքենայացված մաքրման տեխնոլոգիաները:Հավաքարարների միջոցով իրականացվող մաքրման ձեռքի աշխատանքի հիմնական նպատակն է սահմանված նորմերին համապատասխան ապահովելու ընդհանուր օգտագործման տարածքները աղբից, տերևակույտերից, փոշուց, կենդանիների դիակներից մաքրումը և փողոցների երթևեկելի մասերի ջրում-լվացումը՝ բարելավելու միկրոկլիման և նվազեցնել օդի աղտոտվածության աստիճանը: Հավաքարարները մաքրվող տարածքներից աղբը հավաքում են փողոցներում տեղադրված աղբարկղերում, կամ այդ նպատակի համար հատկացված տեղերում՝ կույտերով: Սիզամարգերից մաքրումը կատարվում է ձեռքով մաքրման միջոցով: Մեքենայացված մաքրման դեպքում հավաքարարը մաքրում է փողոցները և հրապարակները ամբողջ լայնությամբ:Մեքենայացված մաքրման խնդիրն է ապահովել փողոցներից աղբի հեռացումը, փոսերի մաքրումը և փողոցների երթևեկելի մասի լվացումը (ջրումը) հատուկ մեքենայի միջոցով:

Ձմեռային մաքրում.

Այն իր մեջ ընդգրկում է, փողոցների, մայթերի, հրապարակների մաքրումը ձյունից, պայքար մայթերի սառցակալման դեմ, սառցակույտերի մաքրումը և հեռացումը: Բացի ձյունից, ձմեռային մաքրման դեպքում ապահովում է փողոցների, մայթերի ու հրապարակների մաքրումը (աղբի մաքրումը և հավաքումը) ձնատեղումների միջև ընկած ժամանակաշրջանում:

Սանիտարական մաքրման սխեման հաստատում է համայնքի ավագանին:

Հաշվարկ
Սանիտարական մաքրման ենթակա ընդհանուր օգտագործման տարածքների

Կատարվել է Մեղրի համայնքի սանիտարական մաքրման ենթակա ընդհանուր օգտագործման տարածքների փաստացի չափագրում,համաձայն որի համայնքի ընդհանուր 180.000 քմ ասֆալտապատ փողոցների,մայթերի և հրապարակների տարածքից մաքրման տակ ընդգրկված է 30.000քմ,որից ձեռքով մաքրման 10.000 քմ,այդ թվում՝

1)համայնքում առաջացող ամսական աղբի ծավալները մոտավոր հաշվարկով կազմում է 720խմ.

2)համայնքում սանիտարական մաքրումը իրականացվում է ամբողջ համայնքի տարածքում.

3)սանիտարական մաքրումը իրականացվում է նաև հուշարձանների տարածքում.

4)աղբահանությունը իրականացվում է ամենօրյա գրաֆիկով, որը աղբատար մեքենաների միջոցով տեղափոխվում է բնակավայրից 5 կմ հեռավորության վրա գտնվող տիպային աղբավայր.

5)աղբի հավաքման աշխատանքները իրականացվում է 3 հատ MAZ և MAZ KBR-P*M. MAZ-4380,2 հատ ԶԻԼ և ԳԱԶ 2109 մակնիշի աղբատար մեքենաների միջոցով.

6)վնասազերծումն կատարվում է հողածածկմամբ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Մ. ԶԱՔԱՐՅԱՆ